Պարտադիր վերապատրաստման դասընթաց

Հետազոտական աշխատանք

Թեմա՝ ***Էկոլոգիական կրթության և դաստիարակության էությունը***

Առարկա՝ Աշխարհագրություն

Կատարող՝ Անուշ Խառատյան
Հ. 98 հիմնական դպրոց
Դասախոս՝ Աշոտ Խաչատրյան

Վերապատրաստում իրականացնող կազմակերպություն
Երևան Լեոյի անվան հ.65 ավագ դպրոց, 2023-2024թթ.

Բովանդակություն

Ներածություն.....2
Գլուխ 1 Էկոլոգիական դաստիարակության նպատակն ու խնդիրները.....4
Գլուխ 2 Էկոլոգիական դաստիարակության նպատակն ու խնդիրները.....9
Եզրակացություն.....15
Գրականության ցանկ.....16

Ներածություն

Հասարակության կարևորագույն խնդիրներից մեկը բնության խելամիտ օգտագործումն ու պահպանումն է՝ հիմքում ունենալով էկոլոգիական օրենքների իմացությունը: Այդ հնարավորությունն ընձեռում է <<էկոլոգիա>> գիտությունը: Առաջին անգամ էկոլոգիայի մասին հիշատակել է գերմանացի հանրաճանաչ գիտնական Էռնեստ Հեկկելը, որը ներկայացրել է էկոլոգիան որպես գիտություն սեփական տան՝ կացարանի մասին: Էկոլոգիա բառը հունարենից թարգմանաբար նշանակում է «oıcos»՝ տուն, կացարան և «logos»՝ գիտություն: Մարդկության «տունը» երկիր մոլորակն է, որն այսօր ավելի քան խնամքի և պահպանման կարիք ունի: Այդ տան գոյությունը պայմանավորված է «բնություն-մարդ-հասարակություն» փոխհարաբերություններով և նշված շղթայում կարևորվում է մարդկային գործոնը: Մարդը հանդիսանալով որպես էկոհամակարգի մասնիկ, իր կործանարար գործունեությամբ կարող է խախտել էկոհամակարգի հավասարակշռությունը և բնականոն գործընթացը: Այսօր Երկիր մոլորակը կանգնած է էկոլոգիական աղետների եզրին, որի փրկության գրավականը մեծապես կախված է մարդկանցից: Եթե ուզում ենք, որ մեր մոլորակը գոյատևի, ապա յուրաքանչյուր մարդ, յուրաքանչյուր դեռահաս, պատանի, երիտասարդ շրջակա միջավայրի պահպանությունը պիտի դարձնի իր սուրբ պարտականությունը: Մարդու աշխատանքային գործունեության հետևանքով շրջակա միջավայրը կարող է խաթարվել երկու դեպքում. ա)երբ մարդը բնությունից կորզում և օգտագործում է ոչ այնքան, որքան կարելի է, և ոչ այնտեղ, որտեղ կարելի է, բ)երբ մարդը բնությանն է վերադարձնում արտադրության այնքան թափոններ, որ բնությունը չի հասցնում ‹‹մարսել››՝ ինքնամաքրվել: Երկու դեպքում էլ տեղի է ունենում էկոլոգիական ճգնաժամ, ապա նաև աղետ: Այս գործում հատկապես մեծ է դպրոցի դերը, քանի որ այստեղ է իրագործվում կազմակերպված, պլանավորված դաստիարակությունը: Հետազոտության նպատակն է ուսումնասիրել բնապահպանական խնդիրները և նրանց ուսուցումը դպրոցում, ուսումնասիրել Էկոլոգիական դաստիարակությունը՝ որպես անձի ձևավորման և զարգացման անհրաժեշտ բաղադրամաս, վերլուծել Էկոլոգիական դաստիարակության նպատակն ու խնդիրները, երեխաներին հաղորդել համապատասխան էկոլոգիական գիտելիքներ և ձեւավորել էկոլոգիական մտածելակերպ, մշակել մարդ-բնություն փոխհարաբերությունների կուլտուրա, դաստիարակել բնության հետ շփվելու, բույսերի ու կենդանիների նկատմամբ սիրո, պատասխանատվության և հոգատարության որակներ: «Աշխարհագրություն» դասընթացի շրջանակներում կարևոր է ճիշտ օգտագործել տարբեր ուսուցման մեթոդներ, որի արդյունքում հնարավոր է դաստիարակել էկոլոգիապես գրագետ և

ազնիվ մարդ: Էկոկրթությունը կազմակերպելու համար անհրաժեշտ է էկոլոգիական կրթության նպատակներից բխող խնդիրների իրականացում. Դրանք են՝

1. Յուրացնել էկոլոգիական հիմնական գաղափարները, սկզբունքները, հասկացությունները
2. Ապահովել գիտելիքների կիրառման նախադրյալներ
3. Ձևավորել էկոլոգիական կուլտուրա, վարք եւ գործելակերպ
4. Հիմնավորել բնապահպանական գիտելիքների օգտագործման անհրաժեշտությունը, բնության նկատմամբ մշակել հոգատար վերաբերմունք

Մշակել փորձարարական հմտություններից եզրակացություններ անելու կարողություն Նպատակը եւ հետազոտական հարցը:	Էկոլոգիական մշակույթի ձևավորումը աշակերտների մոտ: Ի՞նչ դեր ունի կենսաբանությունը աշակերտների էկոլոգիական մշակույթի ձևավորման գործում:
Թեմայի կարեւորությունը եւ նշանակությունը Ձեր/թիրախային խմբի համար	Աշակերտների մոտ բնությունը ճանաչելը և բնության նկատմամբ հոգատար վերաբերմունքի գիտակցության մշակումը:
Ո՞ր առանցքային կոմպետենցիային/կարո ղունակությանն է ուղղված նպատակի ուսումնասիրությունը	Բնության նկատմամբ հոգատար վերաբերմունի գիտակցումը Խնդիրների առաջադրումն ու դրանց լուծման ուղիների առաջադրումը Կենաբանական գիտելիքները գրագետ, մանագիտական լեզվով ներկայացնելը Առողջ ապրելակերպ վարելու կարողությունը

ԳԼՈՒԽ 1 ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Միջազգային հասարակությունը էկոլոգիական կրթության համակարգում դպրոցը ճանաչել է որպես կենտրոնական օղակ, որի հիմքում բնության մեջ պատասխանատու վարքագիծն է: Արդյունքում ձեռք են բերվում գիտելիքներ, կարողություններ, շրջակա միջավայրի ուսումնասիրման և պահպանման պրակտիկ փորձ:

Էկոլոգիական կրթությունն ու դաստիարակությունը ներկայիս ժամանակներում գոյապահպանման պահանջ է:

Պահպանելով բնությունը, մարդիկ ապահովում են իրենց հետագա անվտանգությունը և առհասարակ գոյությունը: Հենց այդ պատճառով էլ որպես հասարակության համար ակտուալ և արդիական խնդիր ներկայացնում ենք այս թեման: Էկոլոգիական գիտակցության ձևավորումը դպրոցի կարևորագույն խնդիրներից մեկն է, որն անխուսափելիորեն անդրադառնում է անհատի բնապահպանական կրթության վրա և խթան է հանդիսանում էկոլոգիական գիտակցության և դաստիարակության զարգացման համար:

Էկոլոգիական կրթությունն անընդմեջ գործընթաց է՝ նպատակաուղղված անձին և բնակչությանը, էկոլոգիական գիտելիքների ուսուցմանը, էկոլոգիական դաստիարակությանը, էկոլոգիական կուլտուրայի արմատավորմանը, բնապահպանության և բնօգտագործման բնագավառում նրանց ճիշտ և խելամիտ կողմնորոշմանը և վարքագծի ձևավորմանը.

Էկոլոգիական դաստիարակությունն էկոլոգիական կուլտուրայի հիմքն ու անբաժանելի մասն է, շրջակա միջավայրի նկատմամբ բարոյագիտակցական վերաբերմունքի մակարդակի բարձրացմանը նպատակաուղղված համակարգված գործընթաց, որը հնարավորություն է տալիս քաղաքացիներին ձեռք բերել գիտելիքներ և կարողություններ, դրսևորել բարոյական չափանիշներ և վարքագիծ՝ բնության հետ փոխներգործության ընթացքում:[1] Հասարակությունն իր զարգացման ներկա փուլում բախվել է էկոլոգիական գլոբալ խնդիրների: Շատ գիտնականներ անդրադառնում են այդ պատճառներին և փորձում են գտնել ելքեր՝ էկոլոգիական ճգնաժամից դուրս գալու համար: Բնապահպանական խնդիրների լուծման համար բավարար չէ բնօգտագործման գործընթացների իրավական և տնտեսական կարգավորումը, անհրաժեշտ է մարդկային գործունեության մեջ նոր արժեքա-նորմատիվային հարաբերությունների յուրացում, որը հնարավորություն կստեղծի էկոլոգիական աշխարհայացքի ձևավորման համար: Կարելի է ասել, էկոլոգիական դաստիարակության դերը ոչ միայն անցյալի արժեքները փոխանցելն է, այլև դպրոցականներին նախապատրաստել ապագայի ստեղծագործական ընկալմանն ու կերտմանը:

Էկոլոգիական դաստիարակությունը առաջին հերթին պետք է ապահովի համապատասխան ունակությունների, արժեքային կողմնորոշումների, վարքագծի և

[1] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=1006

բնության նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի ձևավորումը[2]: Տարածաշրջանային և տեղային բնապահպանական հիմնախնդիրներն արտահայտվում են հասարակության և բնության կապերի համակարգում հակասությունների սնմամբ: Մի շարք գիտնականներ (Վ.Ա. Կոպտյուգ, Ի.Դ. Լապտեև, Ն.Դ.Ռեյմերս) էկոլոգիական հիմնախնդիրներն են համարում՝

1. Կենսոլորտային կենսաբազմազանության կրճատումը
2. Մարդկանց առողջական վիճակի վատացումը
3. Շրջակա միջավայրի աղտոտումը արդյունաբերական թափոններով, լրացուցիչ էներգիայով և տեղեկատվությամբ
4. Կենսոլորտի կենսաբազմազանության կրճատումը

Նշված հիմնախնդիրները չեն կարող շրջանցել կրթության ոլորտը. անհրաժեշտ է նոր մոտեցում էկոլոգիական կրթության նկատմամբ, որի նպատակը պետք է լինի բնության իմաստավորված ընկալումը, նրա հարստությունների նկատմամբ խնայողական վերաբերմունքը, մարդու ներաշխարհի կատարելագործումը: Միայն իրեն՝ որպես մակրոաշխարհի մի մասնիկի, նրա հետ անքակտելի անթիվ կապերով կապված լինելու գիտակցումը թույլ կտա ստեղծել բնության հետ ներդաշնակ հարաբերություններ: Գիտամանկավարժական գրականության մեջ բնապահպանական դաստիարակության նպատակը սահմանվում է՝

1. Բնության, նրա հարստության, շրջակա միջավայրի նկատմամբ խնայողական և հոգատար վերաբերմունքի ձևավորում:

2. Անձի ակտիվ կենսադիրքի մշակում, որը դրսևորվում է բնության նկատմամբ գիտակցական վերաբերմունքի մեջ, որպես ամենօրյա վարքի կանոն:

Սակայն այս սահմանումները լիարժեքորեն չեն արտահայտում էկոլոգիական դաստիարակության բովանդակությունն ու նպատակը: Էկոլոգիական դաստիարակությունը մանկավարժական գործընթացի մի մասն է, և նրա համալիր բնույթից էլ բխում են նրա հիմնախնդիրները.

- ‹‹Մարդ-հասարակություն-բնություն›› ամբողջական համակարգի նկատմամբ դպրոցականների անհատական վերաբերմունքի, բնության հետ շփվելու պատասխանատվության և էկոլոգիական աշխարհայացքի ձևավորում
- նրանց անձնական մասնակցությունը այդ համակարգի գործունեությանը
- էկոլոգիական գիտակցության և էկոլոգիական կուլտուրայի ձևավորում
- բնության հետ հարաբերությունների կարգավորում
- բնության խնայողության անհրաժեշտության համոզմունքների ձևավորում
- էկոլոգիական գաղափարների քարոզչություն

[2] Гушлевская Г.С. Организация работы компьютерно-игрового комплекса дошкольного учреждения. // Детский сад от А до Я. – 2003. – №1

- շրջակա միջավայրի գեղագիտական ընկալում և գնահատում

Դպրոցականների էկոլոգիական դաստիարակության գործընթացն իրականացնելու համար անհրաժեշտ է հաշվի առնել նրա առանձնահակությունները: Այսպիսով էկոլոգիական դաստիարակությունն ուղղված է դպրոցականների մեջ բնության, շրջակա միջավայրի մասին հասկացությունների ձևավորմանը, գիտելիքների հարստացմանը, դա էլ իր հերթին հարստացնում և ապահովում է ընդհանուր դաստիարակության ողջ գործընթացը: Դպրոցականների էկոլոգիական դաստիարակության իրականացման առաջնային գործոնը էկոլոգիական կրթությունն է, որը տրվում է ուսումնական առարկաների միջոցով[3]:

Երկրորդ գործոնը՝ բնության, շրջակա միջավայրի ուսումնասիրման բնապահպանական հատուկ խմբերում և ընկերություններում:

Էկոլոգիական դաստիարակության խնդիրներն են. ա) դպրոցականների կողմից առաջատար գաղափարների և հիմնական հասկացությունների յուրացումը, բ) բնության սոցիալ-տնտեսական արժեքների իմացությունը, գ)սովորողների բնաճանաչողական ընդունակությունների, բնապահպանական կարողությունների և հմտությունների ձևավորումն ու զարգացումը: Ելնելով մեր հետազոտության նպատակից՝ մենք հատուկ ուշադրություն ենք դարձրել այն պայմանների վրա, որոնք նպաստում են անձի էկոլոգիական գիտելիքների, էկոլոգիական վարքի ձևավորմանը՝ որպես էկոլոգիական մշակույթի կառուցվածքային բաղադրիչ: *Էկոլոգիական կրթությունը ուսումնադաստիարակչական գործընթացի կատարելագործման մանկավարժական գործոններից մեկն է: Դպրոցականների ուսումնական ծրագրային նյութում պետք է արտացոլված լինեն մարդու ազդեցության թե՛ դրական, թե՛ բացասական կողմերը: Այդ նյութերի դիդակտիկորեն ճիշտ կառուցված լինելը աշակերտներին պետք է հանգեցնի այն եզրակացության, որ մարդու գործունեությունը պետք է հիմնվի բնության օրենքներն իմանալու և դրանք կիրառելու վրա:*

Էկոլոգիական դաստիարակության նպատակը կարելի է դիտարկել տարբեր տեսանկյուններից՝ ա) սոցիալական, որն արտահայտում է հասարակության պահանջը դաստիարակության նկատմամբ, բ) անհատական-անձնային: Փաստացի, անառարկելի օրինակներով պիտի հասկացնել սովորողներին, թե ինչու պահպանել բնությունը: Այսպես՝ ուսուցիչ-դաստիարակը իր աշակերտներին պարզաբանում է, որ մարդն առանց թթվածնի կարող է ապրել երկու րոպե, իսկ առանց ջրի երեք օր: Պատմում է, որ արդյունաբերության արտանետումների հետևանքով վերջին տարիներին մթնոլորտի ջերմությունը բարձրացել է 0,5°-ով, որի հետևանքները

[3] Ասատրյան Լ.Թ, Ավանեսյան Լ.Գ., Սահակյան Ա.Ս. «Էկոլոգիական դաստիարակության համակարգը ավագ դպրոցում» Երևան, 2003թ.:

կարող են ողբերգական լինել: Եթե մթնոլորտի ջերմությունը շարունակի բարձրանալ, Անտարկտիդայի հզոր սառցադաշտերը կհալվեն և համաշխարհային օվկիանոսի մակարդակը կբարձրանա 66մ-ով ու մերձափնյա շատ տարածքներ կանցնեն ջրի տակ: Ավելին, օզոնի շերտը կարող է ճեղքվել և արեգակի վնասակարար, ճառագայթները կթափանցեն երկրի կենսոլորտը և աղետի պատճառ կդառնան:[4] Այդ աշխատանքը կարող են կատարել աշխարհագրության, քիմիայի, ֆիզիկայի, ֆիզկուլտուրայի ուսուցիչները, ընդհանրապես ողջ մանկավարժական կոլեկտիվը: Սովորողների էկոլոգիական կուլտուրայի ձևավորման համար կարևոր դեր կարող են խաղալ նաև արտադասարանային և արտադպրոցական ուսումնադաստիարակչական աշխատանքները:

Էկոլոգիական դաստիարակության պրակտիկան ցույց է տալիս, որ հիմնական դպրոցի դպրոցականների էկոլոգիական գիտելիքների ձևավորումը իրականացվում է աշխարհագրության դասերին:Հայաստանի Հանրապետությունում էկոլոգիական լուսավորության ընդհանուր ռազմավարություն դեռևս մշակված չէ: Դրա արդյունքում արդի դպրոցում ուսուցման էկոլոգիականացման, էկոլոգիական գիտելիքների ձեռքբերման ուղիների որոշակիացման նկատմամբ իրականացվում են տարբեր մոտեցումներ: Գոհությամբ պետք է նշել, որ այսօր նշանակալիորեն էկոլոգիականացվել են դպրոցում դասավանդվող բոլոր բնագիտական և կենսաբանական առարկաները: Ուսուցիչը պետք է իմանա, թե ինչու որոշ երեխաներ բնությանը վերաբերվում են մեծ հետաքրքրությամբ և սիրով, բացասական արարքներ չեն կատարում, իսկ մյուսները իրենց բոլորովին այլ կերպ են դրսևորում: Ինչպես է ազդում բնության հանդեպ զգայական և գիտակցական վերաբերմունքը բնապահպանական գործունեության վրա:

Ա. Յասմանովը նշում է, որ ոչ ձևական կրթությունն «ընթանում է բնապահպանական, էկոլոգիական, կենսաբանական տեղեկատվության ծավալի մեծացմամբ՝ զանգվածային լրատվության միջոցների, գեղարվեստական և գիտահանրամատչելի գրականության, բնապահպանական կամավոր ընկերությունների քարոզչության միջոցով»: [5]

Էկոլոգիական կրթության համակարգի զարգացման վերաբերյալ մեր ուսումնասիրած գիտական աղբյուրների վերլուծությունը (Ն.Ա. Բերդյաեւ, Վ.Ի. Վերնադսկի, Թ. Միլլեր, Վ.Մ. Սենկեվիչ, Ի.Տ. Սուրավեգինա) թույլ տվեց բացահայտել, որ կրթության այս ձևն ունի իր պատմական ակունքները, որոնք հենվում են աշխարհի ընդհանուր փիլիսոփայական ըմբռնման, մարդու և կյանքի նկատմամբ

[4] Гушлевская Г.С. Организация работы компьютерно-игрового комплекса дошкольного учреждения. // Детский сад от А до Я. – 2003. – №1.

[5] Ասատրյան Լ.Թ, Ավանեսյան Լ.Գ., Սահակյան Ա.Ս. «Էկոլոգիական դաստիարակության համակարգը ավագ դպրոցում» Երևան, 2003թ.:

նրա վերաբերմունքի՝ որպես գլխավոր արժեքի ըմբռնման վրա: «Էկոլոգիան դառնում է մարդու մտածողության գլոբալ միջոցի մի մասը, մարդկանց իրար հետ, հասարակության ու բնության հետ փոխկապվածության իմացության ընդունակությունը»: [6]

Դպրոցականների էկոլոգիական կրթությունը ենթադրում է ուսուցման այնպիսի նոր համակարգեր, ձևեր ու մեթոդներ, որոնք առաջ են տանում ներկա կրթական գործընթացը: Էկոլոգիական կրթության հարցերը քննարկող շատ հետազոտողներ բազմիցս նշել են, որ ուսուցման իրականացումը ենթադրում է դասավանդման մեթոդների համալիր կիրառում, որը նպաստում է ուսուցման արդյունավետության բարձրացմանը, և որին մասնակցում են տարբեր առարկաների ուսուցիչները: Սակայն մենք կարծում ենք, որ էկոլոգիական կրթության գործընթացի արդյունավետությունը կաելի է բարձրացնել նաև ներդասարանային տարբերակված ուսուցման միջոցով, տարբեր մակարդակի առաջադրանքների մշակման, միջառարկայական կապերի կիրառման, դասերի տարբեր ձևերի՝ խաղ-դասերի, էքսկուրսիա-դասերի: Համաձայն այնտեղ ընդունված որոշումների՝ էկոլոգիական կրթությունն ընկալվում է որպես արժեքների և հասկացութունների յուրացման չընդհատվող գործընթաց, որն ուղղված է շրջակա միջավայրի և մարդկանց միջև ներդաշնակ հարաբերությունների ձևավորմանը, որոնք անհրաժեշտ են մարդկանց շրջակա միջավայրում էկոլոգիական ճիշտ վարքագծի դրսևորման համար[7]: «Մարդ-հասարակություն-բնություն» փոխհարաբերությունը պետք է գիտակցվի ոչ միայն սոցիալ-տնտեսական, այլև բարոյական, դաստիարակչական, կրթական առումներով: Ն.Ն. Մոիսեևը նշում է. «Մարդկությունից պահանջվում է գիտակցել բարոյական խնդիրների լուծման առաջնահերթության անհրաժեշտությունը՝ տեխնոլոգիական խնդիրների համեմատությամբ, և ձևավորելու համամարդկային տիեզերական բարոյականություն՝ յուրացնելով էկոլոգիական անպայմանական պահանջը՝ մի՛ վնասիր կենսոլորտը»[8]:

ԳԼՈՒԽ 2 ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԱՆՁԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԲԱՂԱԴՐԱՄԱՍ

1970-ական թվականներին առանձին գիտնականներ պնդում էին, որ անձի համակողմանի ու ներդաշնակ զարգացումը կարելի է իրականացնել դաստիարակության ընդհանուր համակարգի երեք բաղադրամասերով.

[6] Ասատրյան Լ. Թ. , Էկոլոգիական կրթության կառավարման հիմունքներ// Երևան, 2006, էջ 28:
[7] Суравегина И.Т., Сенкевич Ф.М., Как учить экологии// Москва, 1995, стр 64
[8] Моисеев Н.Н., Историческое развитие и экологическое образование// Москва, изд. МНЭПУ, 1995г, 43-45 стр.

գաղափարական, բարոյական և աշխատանքային, որը իհարկե, հեռու է ճշմարտություն լինելուց: Առաջնորդվել նման կոնցեպցիայով կնշանակի. առաջին՝ աղճատել դաստիարակության բովանդակությունը, երկրորդ՝ կտրել դաստիարակության ընդհանուր համակարգի օրինաչափ կապերը, երրորդ՝ արհեստականորեն խոչընդոտել դաստիարակության մյուս բաղադրամասերի ուղղությամբ կրթվելու, դաստիարակվելու, զարգանալու՝ դպրոցականներին ընձեռնված հնարավորությունները, չորրորդ՝ դաստիարակության նկատմամբ չունենալ համալիր մոտեցում կամ ուղղակի հրաժարվել այդ գաղափարից:

Կրթության հիմնական գործառույթը աճող սերնդին հոգևոր, բարոյական, մշակութային այն արժեքների փոխանցումն է, որոնք կուտակվել են նախորդ սերունդների կողմից: Արդյունքում՝ դաստիարակության օբյեկտը՝ անձը, բնօգտագործողի իր դիրքորոշումը փոխում է բնապահպանական դիրքորոշման՝ հաղթահարելով այն բարդույթը, որ կողմնորոշված է մարդու՝ բնության վրա ունեցած մեծ ազդեցությամբ: Բնականաբար, էկոլոգիական կրթության հիմնական նպատակը դառնում է բնության նկատմամբ արժեքային ճիշտ կողմնորոշումը:

Էկոլոգիական կրթության բովանդակությունն իրականացվում է նաև աշխարհագրություն առարկայի միջոցով:

Էկոլոգիական մշակույթին տիրապետող մարդը ձգտում է բնության հետ ներդաշնակության հասնելու ոչ միայն իր արտաքին աշխարհով, այլ ներաշխարհով: Միայն մշակույթի միջոցով է հնարավոր մարդկանց գործունեության համապատասխանեցումը կենսոլորտի եւ կյանքի սոցիալական օրենքներին: Դպրոցական տարիքում այդ ունակությունը ձեւավորվում է հիմնականում բնության վերաբերյալ հատուկ գիտելիքների, հուզական ոլորտի եւ էկոլոգիական գործունեության կարողությունների զարգացման հաշվին: Մարդու շրջապատող աշխարհը բազմաձև ու բազմադեմ է, այն ոչ միայն բնական և սոցիալական աշխարհն է, այլև արվեստի, տեղեկատվության, տեխնիկայի, բարձր տեխնոլոգիաների, առարկաների՝ ներառյալ մարդու ներաշխարհը: Այդ աշխարհներից յուրաքանչյուրի հետ դպրոցականը այնպիսի հարաբերություններ պետք է ստեղծի, որոնք նրան դրանց հետ ներդաշնակ ապրելու հնարավորություն կտան: Հաճախ այդ հարաբերությունները տարերային են, և այդ ժամանակ դեռահասը դասեր է առնում դասի ընթացում՝հաղթահարելով սեփական սխալները: Ընդհանուր առմամբ նրանք մարդկանց, բնության հետ շփվելու դասեր են առնում ծնողներից, ուսուցիչներից, որոնք դպրոցականին փոխանցում են իրենց կենսափորձը: Ժամանակակից աշխարհագրության դասընթացի վերակառուցվող ծրագրերում

արտացոլված է ամբողջ դասընթացի կառուցվածքը, յուրաքանչյուր մասը ավարտվում է էկոլոգիական վերլուծությամբ:[9]

Դպրոցական աշխարհագրության էկոլոգիականացումը, որը կարևոր տեղ է զբաղեցնում էկոլոգիական գիտելիքների ձևավորման մեջ, հնարավորություն է տալիս ուսուցչին ցույց տալու <<բնություն-մարդ-արդյունաբերություն>> համակարգում պատճառահետևանքային կապերը, աշակերտներին ներգրավելու սոցիալական էկոլոգիայի աշխարհը, ուսուցումը դարձնելու ավելի հետաքրքիր, ցույց տալ գործնականում էկոլոգիական գիտելիքների կիրառման հնարավորությունները, ավելի լայնորեն հետազոտելու երկրագիտական նյութը:

Բնության և մարդու փոխգործակցության վերաբերյալ հիմնականում արդեն իրականացվում է էկոլոգիական գիտելիքների կուտակում և համակարգում, իրենց լուծումն են գտնում տարբեր մակարդակների էկոլոգիական խնդիրներ: Ինչպես նաև դպրոցական աշխարհագրության էկոլոգիականացման մեջ առաջատար նշանակություն է տրվումմ մարդուն շրջապատող միջավայրի պահպանման և վերականգնման, ռացիոնալ բնօգտագործման հարցերին: Ն.Ֆ. Վինոկուրովայի կարծիքով՝ <<Դպրոցկան էկոլոգիան և աշխարհագրական կրթության նպատակներն ու խնդիրները սերտորեն կապված են և լրացնում են միմյանց: Դպրոցական աշխարհագրությունը կոչված է ամբողջական պատկերացումներ տալու երկրի՝ որպես մարդկության մոլորակի մասին, ձևավորելու անձի ընդհանուր, մասնավորապես էկոլոգիական մշակույթը>>:[10]

Էկոլոգիական կրթությունն ունենլով միջառարկայական բնույթ, ներթափանցում է քիմիայի, ֆիզիկայի, պատմության, գրականության, կերպարվեստի բնագավառները:

Ուսուցիչների առաջնային խնդիրն է՝ ուսուցումն այնպես կազմակերպել, որ դասանյութը մեխանիկորեն չուսումնասիրվի աշակերտների կողմից, այլ նրանք ըմբռնեն և աշակերտների մեջ հիմնավորվեն բնապահպանական գիտելիքները:

Էկոլոգիական գիտելիքները դաստիարակչական արժեք են ձեռք բերում միայն այն ժամանակ, երբ նրանք դառնում են անձնային արժեքներ, և կապված են կոնկրետ խնդիրների հետ, աշակերտները հայտնվում են այնպիսի իրավիճակում, որում արտահայտվում է մարդկանց վերաբերմունքը խնդիրների լուծման որոնողական ընթացքի նկատմամբ:

Հիմնական դասարաններում էկոլոգիական կրթության և դաստիարակության նկատմամբ պահանջն ավելի է խորանում: Քանի որ չոր նստարանին նստած աշակերտին ինչքան էլ ուզենաս, դժվար է էկոլոգիական կրթություն և դաստիարակություն ապահովել: Մենք համոզված ենք, որ ինֆորմացիոն

[9] Ասատրյան Լ.Թ, «Էկոլոգիական կրթության կառավարման հիմունքները» Երևան, 2009թ.:

[10] Ասատրյան Լ.Թ, «Էկոլոգիական կրթության կառավարման հիմունքները» Երևան, 2009թ.:

տեղեկակտվական դաշտից սահուն և պարտադիր անցում պիտի կատարել լաբարատոր-գործնական: Երեխան և աշխարհը պարապմունքներին, էքսկուրսիաներին և արշավներին, որոնց ընթացքում աշակերտը ոչ միայն դիտողի, այլև բացահայտողի դեր է ընձեռում, կարողանում է գնահատել մարդու ազդեցության հետևանքները շրջակա միջավայրի վրա և համապատասխան եզրակացություններ անել: Այս տարիքային խմբում աշխատող ուսուցչին առաջարկում ենք նրբորեն համակցել հայրենագիտական և էկոլոգիական դաստիարակությունները միմյանց հետ: Բնության մեջ մարդու վարքագծի նորմերի մշակում պետք է կարողանան իրականացնել հենց աշակերտները: Այսպիսի միջոցառումների կազմակերպմանն անհամբերությամբ սպասում են բոլոր աշակերտները: Էքսկուրսիաները և արշավները շատ մեծ արդյունք են տալիս միջառարկայական կապերի գիտելիքների ինտեգրման, խոսքի զարգացման, տեսածն ամբողջ կյանքում պահպանելու և անհրաժեշտության դեպքում կիրառելու հմտություններ են ձեռք բերելու գործում: Դպրոցը՝ որպես էկոլոգիական կրթության կենտրոնական համակարգ, ակտիվ դերակատարում պիտի ստանձնի նաև ծնողական համայնքի համար, այս դաշտը ևս բաց է և անկատար: Մշտապես պետք է իմանալ, որ անձի համակողմանի ու ներդաշնակ զարգացումը ենթադրում է աճող սերնդի մտավոր, բարոյական, աշխատանքային, գեղագիտական, ֆիզիկական, իրավական, տնտեսագիտական, էկոլոգիական դաստիարակություն: Որպեսզի անձը նշված ուղղություններով ունենա և՛ զարգացվածություն, և դաստիարակվածություն, կարևոր է, որ այդ երկուսը ներդաշնակված լինեն: Այսօր, առավել քան երբևիցե, մարդկությանը անհրաժեշտ է ազատագրվել բնության ուժերի դեմ պայքարողի՝ բնության տիրակալի բարդույթից: [11] Գիտնականների կարծիքով, էկոլոգիական կրթությունն ու դաստիարակությունը այն հիմնական ոլորտներն են, որով հնարավոր է փոխել մարդու կողմից բնության նկատմամբ այդպիսի մոտեցումը, և որի շնորհիվ մարդը կարող է հասնել աշխարհի կայուն զարգացման: Տեխնոկրատական քաղաքակրթությունը հակասությունների մեջ է մտել բնության օրենքների հետ՝ օգտագործելով բնությունը, մարդը գերագնահատել է կենսոլորտի հնարավորությունները՝ կորցրածը վերականգնելու առումով: Այսօր ընտանիքի, նախադպրոցական հաստատությունների, դպրոցի խնդիրը պետք է լինի երեխայի գիտակցությանը հասցնել այն գաղափարը, որ յուրաքանչյուր մարդ բնության հետ կապված է անտեսանելի թելերով և լրիվ կախված է նրանից ոչ միայն կենսաբանական, այլև հոգևոր առումով և պետք է նրանից ընդօրինակի ներդաշնակությունը, ռիթմը, համաչափությունը, նպատակահարմարությունը, բարությունը և այլն, որպեսզի նրանք գիտակցեն, որ իրենցից յուրաքանչյուրը բնության մի մասնիկ: Շրջակա միջավայրը բոլոր մարդկանց հոգածության առարկան պետք է լինի, և նրա բարեհաջող վերականգնման համար

[11] Венгер Л.А., Марцинковская Т.Д., Венгер А.Л. Готов ли ваш ребенок к школе. – М.: Знание, 1994. – 192 с.

բոլորը անձնական պատասխանատվություն են կրում: Սովորողների մեջ շրջակա աշխարհի հետ փոխհարաբերության կուլտուրայի պատվաստման գործում գլխավոր դերը պատկանում է դաստիարակությանը, որն ապահովում է անձի հոգևոր-բարոյական հասունացումը՝ նպաստելով նրա՝ բնության հետ ունեցած հարաբերությունների ներդաշնակությունը և որոշում հասարակության սոցիալ-մշակութային զարգացման հեռանկարները: Դաստիարակության հիմնական գործառույթը կայանում է նրանում, որ աճող սերնդին փոխանցի մշակութային այն արժեքները, որոնք կուտակվել են նախորդ սերունդների կողմից և մասնակցությունը յուրաքանչյուրի մշակութային փորձի ձևավորմանը, որը էկոլոգիական իմաստով հասունացնում է անձի շրջակա բնական և սոցիալական միջավայրի հետ ունեցած փոխհարաբերություններում: Արդյունքում՝ դաստիարակության օբյեկտը՝ անձը, բնօգտագործողի իր դիրքորոշումը փոխում է բնապահպանական դիրքորոշման՝ հաղթահարելով այն բարդույթը, որ կողմնորոշված է մարդու՝ բնության վրա ունեցած մեծ ազդեցությամբ: Գիտականների մեկ ուրիշ խումբ էկոլոգիական դաստիարակության հիմնական նպատակը դիտում է որպես անձի էկոլոգիական գիտակցության և մտածողության, էկոլոգիական կուլտուրայի, բնության նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի զարգացում, ինչպես նաև բնօգտագործման գործնական փորձի ձևավորում և տեղյակություն, ճիշտ որոշումների ընդունում, որը և կնպաստի մարդկանց առողջ կենցաղի կայուն սոցիալ-տնտեսական զարգացմանը, երկրի էկոլոգիական անվտանգությանը:[12] Ա.Ա. Վերբիցկին էկոլոգիական կրթություն ասելով հասկանում է մարդու կողմից էկոլոգիական կուլտուրայի յուրացում դաստիարակություն և ինքնակրթության միջոցով, ինչպես նաև կենցաղային և աշխատանքային գործունեության շրջանակներում: Իսկ անընդմեջ էկոլոգիական կրթության նպատակը նա համարում է էկոլոգիական կուլտուրայի հարստացումը ամբողջ կյանքի ընթացքում:[13]

Հիմնվելով աշխարհագրությունից աշակերտների ստացած գիտելիքների վրա՝ պետք է բացահայտել մի կողմից բնակչության թվաքանակի աճի և նրա պահանջմունքների, մյուս կողմից կենսաբանական պաշարների շահագործման մեծացման միջև գոյություն ունեցող պատճառահետևանքային կապերը: Հանրակրթական դպրոցի միջին դասարանների աշխարհագրության ծրագրային նյութը պարունակում է էկոլոգիական հասկացությունների և գիտելիքների որոշակի պաշար, որի հիման վրա գործնական պարապմունքների ընթացքում սովորողները ձեռք են բերում բնապահպանական կարողություններ և հմտություններ՝ միաժամանակ սովորելով արժևորել շրջակա միջավայրը, բնությունը իր բազմաբնույթ գործոններով: Լավ մանկավարժների հետևողական աշխատանքի շնորհիվ էկոլոգիական դաստիարակության արդյունքում

[12] Ասատրյան Լ.Թ, Ավանեսյան Լ.Գ., Սահակյան Ա.Ս. «Էկոլոգիական դաստիարակության համակարգը ավագ դպրոցում» Երևան, 2003թ.:
[13] Венгер Л.А., Марцинковская Т.Д., Венгер А.Л. Готов ли ваш ребенок к школе. – М.: Знание, 1994. – 192 с. 9

կարելի է հասնել որոշակի արդյունքի: Այդ արդյունքը ձեռք բերած էկոլոգիական գիտելիքներն ու էկոլոգիական կարողություններն են: Մենք գտնում ենք, որ էկոլոգիական դաստիարակությունը ավագ սերնդի կողմից դաստիարակության, կրթության, բարոյական որակների ու հոգևոր այլ արժեքների փոխանցում է, նրանց մեջ ձևավորելու բնության նկատմամբ պատասխանատու վերաբերմունք, բնօգտագործման կարողությունների ու հմտությունների ձևավորման առողջ կենսաձևի մշակման նպատակով: Էկոլոգիական դաստիարակության հիմնական նպատակը դառնում է բնության նկատմամբ արժեքային ճիշտ կողմնորոշումների, բնապահպանական ընդունակությունների, պատասխանատու վերաբերմունքի, բնության մեջ ճիշտ վարքագծի ունակությունների դրսևորումը և էկոլոգիական կուլտուրայի ձևավորումը: Այսինքն՝ էկոլոգիական դաստիարակություն ասելով հասկանում են անձի ուսուցման, դաստիարակության և զարգացման գործընթացների ամբողջական միասնությունը, որը նպատակաուղղված է աճող սերնդի էկոլոգիական կուլտուրայի և աշխարհայացքի ձևավորմանը: «Էկոլոգիական գիտակցություն», «էկոլոգիական մտածողություն», «էկոլոգիական կուլտուրա» հասկացությունները նոր են և դեռևս ձևավորման ընթացքի մեջ են: Էկոլոգիական կուլտուրան, որպես դաստիարակության հետևանք, չպետք է ընկալել որպես զուտ արտաքին ներգործություն: Էկոլոգիական կուլտուրայի տիրապետող մարդը տարբերվում է բնության հետ ներդաշնակության հասնելու ոչ միայն իր արտաքին աշխարհով, այլև իր ներքին աշխարհով: Այսօր, երբ բազմաթիվ գործոնների ազդեցության հետևանքով կորչում են բարոյական շատ արժեքներ, և հասարա-կությունը կարիք է զգում իսկական արժեքների, պետք է հենվել բնահարմարության, ճշմարիտ արժեքների գերակայության վրա, որով կարելի է որոշել իսկական էկոլոգիական կուլտուրա ունեցող անձին: Միայն կուլտուրայի միջոցով է հնարավոր մարդկանց գործունեության համապատասխանեցումը կենսոլորտի և կյանքի սոցիալական օրենքներին: Էկոլոգիական կուլտուրա ունեցող մարդը առաջին հերթին հասնում է ներդաշնակության ինչպես իր ներաշխարհի, այնպես էլ արտաքին աշխարհի հետ: Ավագ դպրոցական տարիքում այդ ունակությունը ձևավորվում է հիմնական հատուկ գիտելիքների, հուզական ոլորտի և էկոլոգիական գործունեության կարողությունների զարգացման հաշվին: Մարդուն շրջապատող աշխարհը բազմաձև և բազմադեմ է, դա ոչ միայն բնական և սոցիալական աշխարհն է, այլ արվեստի, տեղեկատվության, տեխնիկայի, բարձր տեխնոլոգիաների, բառերի աշխարհն է: Այդ աշխարհներից յուրաքանչյուրի հետ դպրոցականը այնպիսի հարաբերություններ պետք է ստեղծի, որոնք նրան հնարավորություն կտան՝ ներդաշնակ ապրելու դրանց հետ: Հաճախ այդ հարաբերությունները տարերային են, և այդ ժամանակ դեռահասը դասեր է առնում դասից՝ հաղթահարելով սեփական սխալները: Կարելի է ասել հիմանակն դպրոցի աշակերտները մարդկանց, բնության հետ շփվելու դասեր են առնում ծնողներից,

ուսուցիչներից, որոնք փոխանցում են իրենց կենսափորձը: Սակայն հաճախ ավագ սերնդի էկոլոգիական արժեքների փորձը միշտ չէ, որ համապատասխանում է նոր ժամանակի պահանջներին: Էկոլոգիական դաստիարակության խնդիրը բազմասպեկտ է, և նրա բացահայտման մեթոդաբանական հիմքը համարվում է աշխարհայացքը: Էկոլոգիական դաստիարակությունը՝ որպես դաստիարակության ընդհանուր համակարգի բաղադրամաս, ուղղված է դպրոցականների համակողմանի զարգացմանը և գիտական աշխարհայացքի ձևավորմանը, այնքանով, որ այն անձի գիտակցության և հոգևոր միասնության հիմքն է, քանի որ հայեցակարգային առումով մտնում է անձի գիտական աշխարհայացքի կառուցվաղքի մեջ: Անձի համակողմանի աշխարհայածքի ձևավորումն ունի իր առանձնահատուկ դերը և հնարավորություն է տալիս նրան վերախմբավորելու մարդու բազմապիսի կենսափորձը սոցիալական ակտիվ կենսադիրքի շուրջ՝ գործնական, իմացական, հոգևոր և հուզագնահատողական նպատակով, ինչպես նաև որոշում է անձի ուղղվածության բնույթը:

Եզրակացություն

Անձի էկոլոգիական մշակույթի ձևավորումն կարևորությունը բորոշվում է 20-րդ դարի վերջին և 21-րդ դարասկզբին էկոլոգիական խնդիրների խորացման և մարդկության կողմից դրա իմաստավորման հետ: Հետազոտության իրականացման արդյունքում մենք եկանք այն եզրակացության, որ՝

- Էկոլոգիական դաստիարակությունը անմիջապես կախված է էկոլոգիական գիտակցության, էկոլոգիական կուլտուրայի և գիտելիքների մակարդակից,
- Էկոլոգիական դաստիարակությունը չափանիշ է համարվում մարդու գործնական և հոգատար վերաբերմունքը շրջակա միջավայրի նկատմամբ,
- Էկոլոգիապես դաստիարակված մարդու ձևավորումը ենթադրում է բնական և սոցիալական միջավայրի գործոնների մասին գիտական գիտելիքների օրգանական միասնություն,
- Էկոլոգիական դաստիարակության գործընթացի հիմքում ընկած են սովորողների հոգեկան որակները, բնության նկատմամբ հետաքրքրությունը, արժեքային դիրքորոշումներն ու հարաբերությունները:

Այսպիսով՝ էկոլոգիական կրթությունը շրջակա միջավայրի վրա մարդածին գործոնների ներգործության բացասական հետևանքների հաղթահարման կարևորագույն պայմաններից մեկն է:

Էկոլոգիական դաստիարակությունը անմիջապես կախված է էկոլոգիական գիտակցության, էկոլոգիական կուլտուրայի և գիտելիքների մակարդակից: Էկոլոգիական դաստիարակությունը չափանիշ է համարվում մարդու գործնական և հոգատար վերաբերմունքը շրջակա միջավայրի նկատմամբ և այդ վերաբերմունքի համապատասխանեցումը հասարակական նորմերին: Նպատակաուղղված մանկավարժական գործընթացի պայմաններում էկոլոգիապես դաստիարակված մարդու ձևավորումը ենթադրում է բնական և սոցիալական միջավայրի գործոնների մասին գիտական գիտելիքների օրգանական միասնություն: Մենք, այժմ ապրում են էկոլոգիական այնպիսի ժամանակաշրջանում, ուր ամեն պահի կարելի է սպասել էկոլոգիական աղետի: Դա գլոբալ խնդիր է և վերաբերում է բոլոր ազգերին: Հայաստանում առկա էկոլոգիական խնդիրները հասնում են մեծ չափերի: Որպես օրինակ բերենք այն փաստը, որ ընդհանուր տվյալներով յուրաքանչյուր մարդու հասնում է շատ քիչ կանաչ տարածք: Կանաչ տարածքների բացակայության հետևանքով է, որ հիվանդությունների թիվը շատացել է: Էկոլոգիական դաստիարակության գործընթացի հիմքում ընկած են սովորողների հոգեկան որակները, բնության նկատմամբ հետաքրքրությունը, արժեքային դիրքորոշումներն ու հարաբերությունները:

Գրականության ցանկ

1. Ամիրջանյան Յու.Ա. «Մանկավարժություն», Երևան, 2005թ.:
2. Ասատրյան Լ.Թ, Ավանեսյան Լ.Գ., Սահակյան Ա.Ս. «Էկոլոգիական դաստիարակության համակարգը ավագ դպրոցում» Երևան, 2003թ.:
3. Հովսեփյան , Մարուխյան , «Անձի էկոլոգիական կուլտուրա» Երևան, 2005թ.:
4. Венгер Л.А., Марцинковская Т.Д., Венгер А.Л. Готов ли ваш ребенок к школе. – М.: Знание, 1994. – 192 с.
5. Гушлевская Г.С. Организация работы компьютерно-игрового комплекса дошкольного учреждения. // Детский сад от А до Я. – 2003. – №1.
6. Использование современных информационных и коммуникационных технологий в учебном процессе : учебнометодическое пособие// Д.П. Тевс, В. Н. Подковырова, Е. И. Апольских, М. В, Афонина БГПУ.- 2006 - С. 32-48
7.https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=1006
8. Моисеев Н.Н., Историческое развитие и экологическое образование// Москва, изд. МНЭПУ, 1995г, 53 стр.
9. Суравегина И.Т., Сенкевич Ф.М., Как учить экологии// Москва, 1995, стр 95